Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի (էթիկայի) կանոնների բաժնի պետի տեղակալ Տիգրան Սարուխանյանի և անձնակազմի կառավարման վարչության անձնակազմի համալրման և հաշվառման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Քրիստինե Անտոնյանի 2024թ. փետրվարի 25-ից 28-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը

Տիգրան Սարուխանյան – ՀՀ ՊԵԿ Ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի (էթիկայի) կանոնների բաժնի պետի տեղակալ

Քրիստինե Անտոնյան – ՀՀ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչության անձնակազմի համալրման և հաշվառման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ

2. Գործուղման վայրը և ժամկետները

2024թ. փետրվարի 25-ից 28-ը Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել)

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն (ՀՄԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից յուրաքանչյուր տարի կազմակերպվում է Բարեվարքության ենթակոմիտեի նստաշրջան: Այս տարի տեղի է ունեցել ենթակոմիտեի 23-րդ նստաշրջանը, որի ընթացքում քննարկվել են ՀՄԿ հակակոռուպցիոն և բարեվարքության համագործակցության ծրագրի կատարած աշխատանքները: Աշխարհի մաքսային կազմակերպություններում բարեվարքության բարելավումը ՀՄԿ որդեգրած կարևոր նպատակներից է: Մասնակցությունը ՀՄԿ բարեվարքության ենթահանձնաժողովին հնարավորություն է ստեղծում բարեվարքության ասպարեզում աշխարհում եղած փորձերին և վերջին ձեռքբերումներին ծանոթանալու համար:

5. Քննարկված թեմաները՝

Սույն 23-րդ նստաշրջանի ընթացքում ի թիվս այլ հարցերի հիմնական քննարկման առարկան եղել է հանցավորության դեմ պայքարում մաքսային ծառայողի պաշտպանվածությունը, դրա արդյունավետ կազմակերպումը, Արհեստական ինտելեկտի կիրառությունը հանցավորության և այլ խարդախ դրսևորումների դեմ պայքարում, դրա առնչությունն առհասարակ բարեվարքությանը, ինչպես նաև արհեստական ինտելեկտի հարուցած և ապագայում հարուցելիք խնդիրների և ռիսկերի մասին: Քննարկվել են նաև

կատարողականի արդյունավետության գնահատման մեխանիզմները (ԿԱԳՄ): Ի թիվս այլ մշակված մեխանիզմների հատուկ ընդգծվեց և կարևորվեց մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը բարեվարքության բարելավման և կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ մասնավոր լայն շրջանակների անհանդուրժող կեցվածքի ձևավորմանը:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության և այլ ներկայացուցչությունների միջև առանձին պաշտոնական հանդիպումներ տեղի չեն ունեցել, սակայն տեղի ունեցած ճեպազրույցների ընթացքում և աշխատանքային քննարկումների ժամանակ մտքեր են փոխանակվել ՀՀ ունեցած փորձի վերաբերյալ ՀՄԿ կարողությունների զարգացման գծով տնօրեն Թաել Քանգի, ՀՄԿ բարեվարքության փորձագետ Վագներ Կաստրոյի և այլ տարբեր երկների ներկայացուցիչների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները և ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ որոշվեց հաջորդ նստաշրջանն անցկացնել հիբրիդային ձևաչափով, նստաշրջանի վայրն ու ամսաթիվը կհայտնվի լրացուցիչ: Ընտրվեցին նոր նախագահը և փոխնախագահը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Նստաշրջանի ընթացքում այլ երկների հետ փորձի փոխանակումն առավել արդյունավետ և հասանելի դարձնելու նպատակով ենթահանձնաժողովի նախագահողն առաջարկեց wcoomd.org կայքում <CLiKC> հարթակի միջոցով մասնակիցները կապ հաստատեն միմյանց հետ (https://clikc.wcoomd.org):

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Տիգրան Սարուխանյան

Քրիստինե Անտոնյան

28.02.2024թ.